ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-22-9/50-3

ք. Երևան «17» հոկտեմբերի 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ԿՈՆՑԵՌՆ-ԷՆԵՐԳՈՄԱՇ» ՓԲԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Բ. Թադևոսյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***8,850,250 (ութ միլիոն ութ հարյուր հիսուն հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** *բացառությամբ պայմանագրի Հավելված 1-ով սահմանված 44-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակի, որի մասով Վաճառողը ԱԱՀ չի վճարում:* Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո համապատասխան **եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.:**

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **5** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի

---

[21] *Եթե պայմանագիրը նախատեսում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
ք. Երևան Բագրևանդի 5	Ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 217002182558001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01210095
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Բ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-9/50-3 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

	Գնման առարկայի	
Հ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիր
6	Տրանսֆերին թեսթ	100 թեսթ պարունակող կասետ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի համար:
7	Կոմպլիմենտ ֆակտոր C4c	100 թեսթ պարունակող կասետ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի համար:
8	Կալիբրատոր C.f.a.s.	36մլ լուծույթ՝ 12x 3մլ-ոց ֆլակոններով, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
9	Կալիբրատոր C.f.a.s. Lipids	Լրակազմում 3մլ լուծույթ՝ 3x1 մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
10	Կալիբրատոր Preciset RF,	Լրակազմում 5մլ լուծույթ՝ 5x 1մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
11	Կալիբրատոր CFAS Myo	Լրակազմում 3մլ լուծույթ՝ 3x1մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
12	Կալիբրատոր CFAS HbA1c	Լրակազմում 6մլ լուծույթ՝ 3x2մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
13	Կալիբրատոր C.f.a.s. PAC	Լրակազմում 3մլ լուծույթ՝ 3x 1մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
14	Կալիբրատոր Precimat Chromogen	Լրակազմում 3մլ լուծույթ՝ 6x0.5մլ-ոց ֆլակոններով գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
15	Ստուգիչ RF Control	Լրակազմում 2մլ լուծույթ՝ 2x1մլ-ոց ֆլակոններով - մակարդակ 1, 2x1 մլ-ոց ֆլակոններ - մակարդակ 2, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
16	Ստուգիչ PrecicChrom I/II	Լրակազմում 6մլ լուծույթ՝ 6x1մլ-ոց ֆլակոններով -մակարդակ 1, 6x1մլ-ոց ֆլակոններով -մակարդակ 2, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
17	Ստուգիչ MYO Control Set	Լրակազմում նորմալ և պաթոլոգիական շիճուկներ, յուրաքանչյուրից 6մլ՝ 2x3 մլ-ոց ֆլակոններով - մակարդակ 1, 2x3 մլ - մակարդակ 2, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas integra 400 plus, C 111 և 6000 անալիզատորի համար:
20	Էկոտերջենտ-Ecotergent	Լրակազմում 12x59 մլ, գործարանային փաթեթավորումով: Նախատեսված է Cobas integra 400 plus և 6000 անալիզատորի համար:
21	Ակտիվատոր	Լրակազմում 108մլ լուծույթ՝ 9x12մլ-ոց ֆլակոններով, գործարանային փաթեթավորմամբ: Նախատեսված է Cobas 6000 անալիզատորի համար:
27	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK	Լրակազմում 200 թեսթ նախատեսված Կոբաս C111 անալիզատորի համար: Գործարանային փաթեթավորումով տուփ:
28	Ադսորբենտ Chimneys for Reagent bottles	Լրակազմում 96 հատ, C111 անալիզատորի համար: Գործարանային փաթեթավորումով տուփ
37	Թրոմբին	Լրակազմում 50 մլ՝ 10 x 5 մլ ֆլակոններով՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:

38	ԱՊՏԺ ActinFS	Լրակազմում 100 մլ՝ 10 x 10 մլ ֆլակոններով ՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:
39	Իննովին	Լրակազմում 100 մլ՝ 10 x 10 մլ ֆլակոններով ՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:
40	PTմուլտի կալիբրատոր	Լրակազմում 6 մլ՝ 6 x 1 մլ ֆլակոններով՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:
41	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E	Լրակազմում 10 մլ՝ 10 x 1 մլ ֆլակոններով ստուգիչ հեղուկ նորմալ ՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:
42	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E	Լրակազմում 10 մլ՝ 10 x 1 մլ ֆլակոններով ստուգիչ հեղուկ պաթոլոգիական ՝ գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է CA-50 և CA530 կոագուլոմետրի համար:
43	Լվացող հեղուկ	Լվացող հեղուկ CAClean, 50 մլ ՝ գործարանային փաթեթավորումով
44	Փորձանոթ նմուշի հակամակարդիչով	Արյան նմուշառման փորձանոթ՝ վակումային, Na ցիտրատով (խտությունը՝ 0.109mol/L, 3.2%): Փորձանոթի ծավալը՝ 3.5 մլ, չափը՝ 13x75 մմ: Կափարիչի տեսակը՝ պտուտակավոր: Ձևաչափը՝ 50 փորձանոթ/տուփում:
45	C-Պեպտիդ	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
46	Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
47	CA 72-4	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
48	Հեպատիտ B HBeAg	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
49	Տոքսոպլազմա IgM	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
50	Տոքսոպլազմա IgG	100 թեսթ, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի համար:
51	Պրոգեստերոն CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
52	DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
53	Տեստոստերոն CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
54	Anti-Թիրեոգլոբուլին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
55	Anti-TPO ռեակտիվ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
56	Էստրադիոլ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
57	Կորտիզոլ CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
58	Բետա խորիոն գոնադոտրոպին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
59	Ալֆա ֆետոպրոտեին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ:

		Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
60	Պարա թիրոիդ հորմոն PTH CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
61	CA 125 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
62	CA 15-3 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
63	CA 19-9 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
64	CA 72-4 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
65	Ֆերիտին CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:
66	Վիտամին B 12 CS	Կալիբրատորը նախատեսված համապատասխան ռեագենտի համար, գործարանային փաթեթավորումով տուփ: Նախատեսված է Cobas 6000 անալզատորի շահագործումը ապահովելու համար:

1. Ապրանքները պետք է ունենան.

1.1 Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO 13485 և/կամ GMP և/կամ այլ):

1.2 Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր: Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

1.3 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2.2 «1.1» և «1.2» կետերում նշված փաստաթղթերի պատճենները: «1.2» կետում նշված փաստաթղթի պատճենների ներկայացումը՝ CE (Conformité Européenne) կամ FDA (Food and Drug Administration) կամ EAC (Eurasian Conformity) կամ EACMed (Eurasian Conformity medical) մակնշում ունեցող ապրանքների համար պարտադիր չէ:

2.3 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.3» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.3» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել «կամ համարժեք» բառերը:

4. Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ Կենտրոնական բժշկական բազա:

- Կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանք մատակարարելու դեպքում հնարավոր է ապրանքի ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

[illegible]

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկայի					
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարման ժամկետը 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.11.2022թ.
6.	Տրանսֆերին թեսթ	հատ	1	26,030	26,030	1
7.	Կոմպլիմենտ ֆակտոր C4c	հատ	1	47,600	47,600	1
8.	Կալիբրատոր C.f.a.s.	լրակազմ	5	34,600	173,000	5
9.	Կալիբրատոր C.f.a.s. Lipids	լրակազմ	3	17,000	51,000	3
10.	Կալիբրատոր Preciset RF,	լրակազմ	3	42,340	127,020	3
11.	Կալիբրատոր CFAS Myo	լրակազմ	2	30,100	60,200	2
12.	Կալիբրատոր CFAS HbA1c	լրակազմ	3	77,130	231,390	3
13.	Կալիբրատոր C.f.a.s. PAC	լրակազմ	3	39,300	117,900	3
14.	Կալիբրատոր Precimat Chromogen	լրակազմ	2	57,300	114,600	2
15.	Ստուգիչ RF Control	լրակազմ	2	60,000	120,000	2
16.	Ստուգիչ PrecicChrom I/II	լրակազմ	1	70,200	70,200	1
17.	Ստուգիչ MYO Control Set	լրակազմ	1	85,500	85,500	1
20.	Էկոտերջենտ-Ecotergent	լրակազմ	3	250,000	750,000	3
21.	Ակտիվատոր	լրակազմ	5	35,840	179,200	5
27.	Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK	լրակազմ	1	36,790	36,790	1
28.	Ադսորբենտ Chimneys for Reagent bottles	լրակազմ	5	16,560	82,800	5
37.	Թրոմբին	լրակազմ	8	73,800	590,400	8
38.	ԱՊՏԺ ActinFS	լրակազմ	8	131,400	1,051,200	8
39.	Իննովին	լրակազմ	8	57,600	460,800	8
40.	PTմուլտի կալիբրատոր	լրակազմ	2	118,400	236,800	2
41.	Ստուգիչ հեղուկ CiTrol1-E	լրակազմ	13	32,000	416,000	13
42.	Ստուգիչ հեղուկ CiTrol2-E	լրակազմ	3	32,000	96,000	3
43.	Լվացող հեղուկ	հատ	20	20,700	414,000	20
44.	Փորձանոթ նմուշի հակամակարդիչով	հատ	20000	53.50	1,070,000	20000
45.	C-Պեպտիդ	լրակազմ	3	132,400	397,200	3
46.	Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG	լրակազմ	2	155,800	311,600	2
47.	CA 72-4	լրակազմ	1	90,700	90,700	1
48.	Հեպատիտ B HBeAg	լրակազմ	1	131,520	131,520	1

49.	Տոքսոպլազմա IgM	լրակազմ	2	80,700	161,400	2
50.	Տոքսոպլազմա IgG	լրակազմ	3	80,700	242,100	3
51.	Պրոգեստերոն CS	լրակազմ	2	26,800	53,600	2
52.	DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր	լրակազմ	2	26,800	53,600	2
53.	Տեստոստերոն CS	լրակազմ	2	26,800	53,600	2
54.	Anti-Թիրեոգլոբուլին CS	լրակազմ	3	26,800	80,400	3
55.	Anti-TPO ռեակտիվ CS	լրակազմ	3	25,500	76,500	3
56.	Էստրադիոլ CS	լրակազմ	2	26,800	53,600	2
57.	Կորտիզոլ CS	լրակազմ	2	26,800	53,600	2
58.	Բետա խորիոն գոնադոտրոպին CS	լրակազմ	2	26,800	53,600	2
59.	Ալֆա ֆետոպրոտեին CS	լրակազմ	2	26,800	53,600	2
60.	Պարա թիրոիդ հորմոն PTH CS	լրակազմ	2	26,800	53,600	2
61.	CA 125 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
62.	CA 15-3 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
63.	CA 19-9 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
64.	CA 72-4 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
65.	Ֆերիտին CS	լրակազմ	2	26,800	53,600	2
66.	Վիտամին B 12 CS	լրակազմ	2	26,800	53,600	2
Ընդամենը					**8,850,250**	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

ԱՐ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Concern-Energomash

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-9/50-3 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի			
չ/հ	CPV կոդը	CPV անվանումը և ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.,
6.	33691162/30	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Տրանսֆերին թեստ/	26,030
7.	33691162/35	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Կոմպլիմենտ ֆակտոր C4c/	47,600
8.	33691420/55	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր C.f.a.s./	173,000
9.	33691420/57	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր C.f.a.s. Lipids/	51,000
10.	33691420/59	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր Preciset RF/	127,020
11.	33691420/60	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր CFAS Myo/	60,200
12.	33691420/61	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր CFAS HbA1c/	231,390
13.	33691420/62	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտԿալիբրատոր C.f.a.s. PAC/	117,900
14.	33691420/63	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կալիբրատոր Precimat Chromogen/	114,600
15.	33691420/66	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ RF Control/	120,000
16.	33691420/67	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ PrecicChrom I/II /	70,200
17.	33691420/70	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ MYO Control Set/	85,500
20.	33691420/73	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Էկոտերջենտ·Ecotergent/	750,000
21.	33691420/76	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ակտիվատոր/	179,200.00
27.	33691420/93	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կրեատին ֆոսֆոկինազա CK-NAK /	36,790
28.	33691420/108	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ադսորբենտ Chimneys for Reagent bottles/	82,800
37.	33691420/124	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Թրոմբին/	590,400
38.	33691420/125	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/ԱՊՏժ ActinFS/	1,051,200
39.	33691420/127	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Իննովին/	460,800
40.	33691420/129	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/PTմուլտի կալիբրատոր/	236,800
41.	33691420/130	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ հեղուկ CiTrol1-E/	416,000
42.	33691420/131	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ստուգիչ հեղուկ CiTrol2-E/	96,000
43.	33691162/43	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ)/Լվացող հեղուկ/	414,000
44.	33191310/3	Փորձանոթներ/Փորձանոթ նմուշի հակամակարդիչով/	1,070,000
45.	33691420/157	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/C-Պեպտիդ/	397,200
46.	33691420/163	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հերպեսվիրուս 2 HSV 2 IgG/	311,600
47.	33691420/169	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/CA 72-4/	90,700
48.	33691420/176	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Հեպատիտ B HBeAg/	131,520
49.	33691420/178	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տոքսոպլազմա IgM/	161,400
50.	33691420/179	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տոքսոպլազմա IgG/	242,100
51.	33691420/185	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Պրոգեստերոն CS/	53,600
52.	33691420/188	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/DHEA-S CS ռեակտիվի կալիբրատոր/	53,600
53.	33691420/189	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Տեստոստերոն CS/	53,600
54.	33691420/190	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Anti-Թիրեոգլոբուլին CS/	80,400

55.	33691420/191	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Anti-TPO ռեակտիվ CS/	76,500
56.	33691420/192	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Էստրադիոլ CS/	53,600
57.	33691420/193	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Կորտիզոլ CS/	53,600
58.	33691420/202	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Բետա խորիոն գոնադոտրոպին CS/	53,600
59.	33691420/203	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ալֆա ֆետոպրոտեին CS/	53,600
60.	33691420/204	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտՊարա թիրոիդ հորմոն PTH CS/	53,600
61.	33691420/206	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/CA 125 CS/	53,600
62.	33691420/207	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/CA 15-3 CS/	53,600
63.	33691420/208	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/CA 19-9 CS/	53,600
64.	33691420/209	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/CA 72-4 CS/	53,600
65.	33691420/210	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Ֆերիտին CS/	53,600
66.	33691420/211	Լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Վիտամին B 12 CS/	53,600
Ընդամենը			**8,850,250**

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ
տնօրեն

Է. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-22-9/50-3 պայմանագրի

Պայմանագրի կողմ

____

____

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

հվհհ ____________________

Պատվիրատու

____

____

գտնվելու վայրը ______________

հհ______________________

հվհհ____________________

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«   » «   » 20   թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

____

_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «   » «   » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

____

ստորագրություն

____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

____

ստորագրություն

____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-22-9/50-3 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն